«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<ՍԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ>>

Դաստիարակ՝ *ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Մանկապարտեզ՝ *«ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ՆՈՒՀ »* ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն ---------- 3
2. Նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման և կրթության գործընթացը Հայաստանում ---------- 4
3. Գնահատման կարգը ---------- 5
4. Սանի ԿՁԱՊԿ բացահայտումը ---------- 6
5. 1-3 տարեկանի զարգացման շեղումներ ---------- 6
6. 3-6 տարեկանի զարգացման շեղումներ ----------7
7. Հոգեբանական դժվարություններ և խնդիրներ, որոնք սկսվում են վաղ մանկական տարիքում ---------- 8
8. Ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպում --------- 13
9. Խոսքի խանգարում ունեցող նախադպրոցականների ուսումանադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպում ----------15
10. Վարքային և հուզական խանգարումներ ունեցող նախադպրոցականների հետ տարվող ուսումնական աշխատանքների կազմակերպում ----------17
11. Ինչպես աշխատել տագնապայնություն ունեցող երեխաների հետ ----------18
12. Ինչպես ճիշտ աշխատել աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող երեխաների հետ ----------19
13. Եզրակացություն ----------20
14. Գրականության ցանկ ----------21

Ներածություն

Մարդիկ տարբեր են, դա բնական է և այդ տարբերությունն էլ ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ և, հետևաբար, այն պետք է իր արտացորումը գտնի նաև նախակրթարաններում: Նախակրթարանները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր մոտեցումներ (այդ թվում՝ անհատակա մոտեցումներ) ու հնարներ:

Սիրենք մեր երեխաներին այնպիսին ինչպիսին որ կան՝ անտաղանդ, ձախորդ, հասուն: Ուրախանանք, երբ շփվում ենք նրանց հետ, քանի որ երեխաները տոն են, քանի դեռ մեր կողքին են:

Երեխաները կյանքի ծաղիկներն են: Ծաղիկների նման նուրբ ու քնքուշ էակներ, որոնց խնամելը և որոնց մասին հոգ տանելը կարևոր ու հաճելի պարտականություն է: Նրանք ջերմության, սիրո, ուշադրության և հոգատարության կարիք ունեն և միևնույն ժամանակ նույն այդ սիրո ու ջերմության անսպառ աղբյուրներն են, որոնց բարենպաստ միջավայր է պետք աճելու, հասունանալու և ծաղկելու համար:

Երեխաները տարբեր են: Նրանց յուրաքանչյուրի զարգացումը ընդհանուր օրինաչափութ-յունների ենթարկվելուց զատ ունի իր առանձնահատկությունները, զարգացման իր տեմպը: Նրանցից որևէ մեկը միգուցե դեռ չի կարողանում չորս գույն տարբերակել, ինչպես դա անում են իր հասակակիցները, մեկ ուրիշը միգուցե չի պատկերացնում, թե ինչպես պտտի հեծանիվի անիվները կամ ինչպես պահպանի խաղի կանոնները, որ ստիպված չլինի անընդհատ դուրս մնալ խաղից:

Նրանք տարբեր են. տարբեր են իրենց ընկալմամբ, մտածողությամբ, վարքով, հույզերով: Իսկ մենք՝ նրանց շրջապատողներս, հաճախ մեր ուշադրությունը սևեռում ենք հենց այդ տարբերությունների վրա ու դրանք ընկալում որպես խնդիր:

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման հիմնաքարը երեխայի հետաքրքրություն-ների և ընդունակությունների բացահայտումն է ու նրա հետ փոխվստահության մթնոլորտի ստեղծումն է:

Այսօր մեր արդիական խնդիրներից մեկն է ճիշտ բացահայտել և գնահատել այդ երեխա-ներին, նպաստելով զարգացմանը:

ԿՁԱՊԿ ժամանակին բացահայտումը նպաստում է երեխայի առողջ և լիարժեք զարգա-ցումն ապահովելուն, ինչպես նաև երեխայի զարգացման շեղումները վաղ հայտնաբերե-լուն : Այդ նպատակը իրագործելու համար մեզ պետք է հստակ տարբերակել այն դեպքերը, երբ արդեն պետք է անհանգստանալ:

Անհրաժեշտություն է առաջանում կյանքի կոչել երեխաների հետ իրականացվող աշխա-տանքների տարբեր արդյունավետ հնարներ, նորարարական մոտեցումներ և սկզբունքներ, ուսումնադաստիարակչական աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար:

Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է յուրաքանչյուր երեխայի համար, առանձին վերցրած, ապահովվում, որ հենց նա ստանա կարողություններին և կարիքներին համապատասխան կրթություն:

Կրթության զարգացման ապահովման համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում երեխային դիտել և բացահայտել որպես անհատ՝ իր ընդունակությունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով և դժվարություններով:

Նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման և կրթության գործընթացը Հայաստանում

ՀՀ-ում <<Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքն ընդունվեց 2005թ. նոյեմբերի 15-ին: Վերջինս կանոնակարգեց ոլորտի գործունեությունը և ապահովեց նախադպրոցական կրթության ծառայությունների մատչելիության շարունակականության համար իրավական հիմքերը: Հաշվի առնելով ՀՀ – ում համընդհանուր ներառական կրթության ներդրման քաղաքականությունը 2020թ. մայիսի 6- ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց <<Նախադպրոցական կրթության մասին >> ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> օրենքը, որի համաձայն արձանագրվեցին նախադպրոցական կրթության ոլորտի զարգացմանը և կանոնակարգմանը վերաբերող մի շարք հոդվածներ, համաձայն որոնց՝ սահմանվեցին ՀՀ նախադպրոցական կրթության բնագավառում բոլորի համար հավասար նախադպրոցական կրթության իրավունքի իրացումը, նախադպրոցական կրթության հասանելիության և մատչելիության հիմքերը:

Նույն օրենքի համաձայն՝ նախատեսվում է ՀՀ- ում ներդնել նախադպրոցական համընդհանուր ներառական կրթություն: Այս գործընթացը նախատեսվում է իրականացնել 2021-2023 թթ՝ համաձայն ՀՀ կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի: [<<Նախադպրոցական կրթության մասին >> օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենք, Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ, հոդված 2, կետ 3]:

ԿԶԱՊԿ ունեցող երեխաների կրթությունը նախադպրոցական ուսունական հաստատություններում ենթադրում է, որ երեխաներն ընդունեն և արժևորեն բազմազանությունը հենց մանկուց: Այս նկատառումից ելնելով՝ կարևոր է, որ ՆՈՒՀ-երի մանկավարժները և աշխատակիցները հստակ պատկերացնեն և ընդունեն <<բազմազանություն>> հասկացությունը:

Գնահատման կարգը

ՆՈՒՀ հաճախող յուրաքանչյուր երեխա դիտարկվում է դաստիարակի կողմից: Հարմարեցման շրջանում դաստիարակը անընդհատ հետևում և դիտարկում է երեխանե-րին: ԿԶԱՊԿ ունեցող երեխաները անկախ մեր կամքից ուշադրություն են գրավում: Չլինելով մասնագետ կարող ենք ուսումնական գործընթացում բացահայտել, քանի որ ԿԶԱՊԿ ունե-ցող երեխաները գործունեության տարբեր ձևերում դժվարություն են ունենում համեմատած իրենց հասակակից երեխաների:

Դաստիարակը նկատելով սանի խնդիրը զրուցում է ծնողի հետ, որի համաձայնությունը ստանալուց հետո գրավոր դիմում է ՆՈՒՀ-ի տնօրենին՝ իրականացնելու երեխայի նախադպրոցական մակարդակի Գնահատումը:

Այնուհետև մանկավարժական աշխատողների և աջակցման խմբի կողմից բացահայտում են երեխայի զարգացման հնարավորությունները, ինչպես նաև միջավայրի խթանող կամ խոչընդոտող գործոնները:

Նախադպրոցական մակարդակում ծառայությունները տրամադրում են այն երեխաներին, ովքեր տվյալ մակարդակում սահմանված կարգով գնահատվել են և հաստատվել է, որ ունեն մանկավարժահոգեբանական աջակցության կարիք:

Եթե երեխայի Նախադպրոցական մակարդակի Գնահատման եզրակացություն վկայում է երեխայի գործունեության որևէ ոլորտի թեթև աստիճանի խանգարման մասին, ապա մանկավարժական աշխատողները և ՄՀ աջակցության խումբը, սերտ համագործակցելով երեխայի ծնողների հետ, մշակում են Կանխարգելիչ միջամտությունների պլան՝ ծառայութ-յունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ (ուսուցման և դաստիարակության մեթոդներ, տեղի և խմբասենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն):

Եթե երեխայի Նախադպրոցական մակարդակի Գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի գործունեության որևէ ոլորտի միջին, ծանր կամ խոր աստիճանի խանգարման մասին, ապա հաստատությունը ծանուցում է ծնողին այդ մասին և ծնողի համաձայնությամբ, դիմում է ՏՄԱԿ-ին՝ իրականացնելու Տարածքային մակարդակի Գնահատում:

Եթե խնդիրը միջին է կամ ծանր, գնահատումը իրականացնում է ՏՄԱԿ-ի աշխատակիցների կողմից: Կարիքի ճանանչման դեպքում բացվում է անհատական ուսուցման և զարգացման պլան՝ ԱՈՒԶՊ

Ծառայությունների տրամադրման արդյունավետության և որակի ապահովման համար պատասխանատվությունը կրում է հաստատությունը՝ ի դեմս նախադպրոցական ուսումնական հաստատության կամ ՏՄԱԿ-ի ՄՀ աջակցության խմբի:

Նախադպրոցական մակարդակում մանկավարժները և ՄՀ աջակցության խումբը սերտ համագործակցելով երեխայի ծնողների հետ՝ իրականացնում են կանխարգելիչ միջամտութ-յունների պլանով նախատեսված գործողությունները և փորձում երեխային աջակցել, որ-պեսզի նախադպրոցական կրթական ծրագրերը յուրացնի հասակակիցների հետ զուգընթաց:

Սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտում

Սանի ԿԶԱՊԿ (կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք) բացահայտումը իրականության մեջ այն եզակի խնդիրներից է, որը անդրադառնում է կարիքի ժամանակին և ճիշտ բացահայտմանը, որը միշտ պետք է գտնվի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Նախադպրոցական հաստատությունը նպատակ ունի երեխայի առողջ և լիարժեք զարգա-ցումն ապահովելու, ինչպես նաև երեխայի զարգացման շեղումները վաղ հայտնաբերելուն: Այդ նպատակի իրագործման համար մեզ պետք է հստակ տարբերակել այն դեպքերը, երբ արդեն պետք է անհանգստանալ:

Մարդկային զարգացման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն ունի աճման ու փոփոխության համընդհանուր, կանխատեսելի հաջորդականություն , որը երեխաների մոտ նկատվում է կյանքի առաջին տարիների ընթացքում:

1-3 տարեկանի զարգացման շեղումներ

1 - 3 տարեկանում բուռն զարգացում է ապրում երեխայի ոչ միայն հենաշարժողական համակարգը, այլև հոգեկան գործընթացները, սոցիալական հմտությունները: Երեխան ֆիզիկապես մեծանում և առավել ինքնուրույն է դառնում այս տարիքում : Այդ պատճառով պետք է ճիշտ դիտարկում կատարվի, և անհանգստանալ, եթե երեխան՝

- կանգնելու համար ինքը ջանք չի գործադրում,
- նույնիսկ 15 ամսականում կարճատև չի կարողանում կանգնել,
- 17 ամսականում բռնվելով չի քայլում,
- 18 ամսականում չի փորձում բարձրանալ աթոռների կամ այլ կահույքի վրա,
- բացի լացից այլ ձևով չի փորձում հասկացնել իր կարիքների մասին,
- գլխի շարժումներով չի արտահայտում <<այո>> կամ <<ոչ>>,
- 18-20ամսականում դեռևս ոչ մի բառ չի ասում,
- 21 - 23 ամսականում դեռևս առանց օգնության չի քայլում,
- 24 ամսականում չի փորձում լայն քայլերով վազել, իսկ քայլելիս հաճախ է ընկնում,
- չի խաղում ուրիշ երեխաների հետ,
- 24 ամսականում չի խզբզում մատիտով, 2,5 տարեկանում դեռևս չի բռնում մատիտը:
- չի ասում <<մամա>>, <<պապա>>,
- չի կարողանում լավ ծամել ու կուլ տալ կիսապինդ կերակուրը,
- 2,5 տարեկանում մի ձեռքով բռնած աստիճաններով չի բարձրանում,
- 2,5 տարեկանում ակնհայտորեն օգտագործում է միայն մեկ ձեռքը՝ աջը կամ ձախը,
- 2,5 տարեկանում դեռևս ինքնուրույն չի օգտվում բաժակից,
- 2,5տարեկանում անտարբեր է երեխաների նկատմամբ,
- 2,5 - 3 տարեկանում նետում է գնդակը, սակայն հայացքով չի հետևում
- 2,5 – 3 տարեկանում չի ասում երկու բառից կազմված նախադասություն:

3 – 6 տարեկանի զարգացման շեղումներ

3 – 6 տարեկանում երեխան ակտիվորեն ճանաչում է իրեն շրջապատած աշխարհը, ստեղծում հարաբերություններ այդ աշխարհի հետ, հսկայական գիտելիքների պաշար հավաքում դրա մասին, ընկերություն անում հասակակիցների հետ, սեփական տեսակետ և կարծիք ձևավորում, նախապատրաստվում դպրոցին և այլն: Շատ որակներ կարող են ձևավորվել միայն այս տարիքում: Եթե մենք բաց ենք թողնում այդ որակների ձևավորման համար ամենազգայուն տարիքային փուլը, հետագայում հնարավոր է դրանք այլևս չձևավորվեն: Այդ պատճառով, կարևոր է զգոն լինել և վաղ հայտնաբերել երեխայի զարգացման դժվարություններն ու բացթողումները: Պետք է անհանգստանալ եթե եթեխան՝

- չի սիրում համատեղ խաղալ, հաճախ ընդհարվում է հասակակիցների հետ,
- ագրեսիվ է իրենից փոքր երեխաների նկատմամբ,
- վարժ կերպով չի կարողանում օգտվել զուգարանից,
- դժվարանում է մի ոտքի վրա ցատկել,
- 5 տարեկանում դեռևս թերի է բառերը արտասանում,
- չի հասկանում մեկ հատի, երկու հատի իմաստը,
- չի ճանաչում ոչ մի գույն,
- մատիտը բռնում է ոչ թե մատներով, այլ ամբողջ ափով,
- չի տարբերում փոքրն ու մեծը,
- լավ չի վազում, հաճախ ընկնում է,
- խոսում է երրորդ դեմքով՝ առաջինի փոխարեն
- մեկ ձեռքով բռնելով բազրիքից՝ չի կարողանում աստիճաններից իջնել:

Ի վերջո, պետք է անհանգստանալ, եթե երեխան իր վարքով, գիտելիքներով, հմտություններով և կարողություններով, անգամ բնավորությամբ ցայտուն տարբերվում է իր հասակակից այլ երեխաներից: Ինչպես նաև անհանգստության առիթ կարող է լինել երեխայի արտաքին տեսքը՝ տևական խոժոռ տրամադրությունը և նմանատիպ այլ արտառոց երևույթներ:

Հոգեբանական դժվարություններ և խնդիրներ, որոնք սկսվում են վաղ մանկական տարիքում

Հոգեբանական խնդիրներն ու դժվարությունները բազմաթիվ են: Այդ խնդիրների մի մասը հանդիսանում են բժշկական համախտանիշները, մի մասը հուզական ոլորտի խնդիրները, մի մասը վարքային, մյուսները զարգացման խանգարումներ, ինչպես նաև նորմա համարվող երևույթներ,ֆիզիոլոգիական առանձնահատկություններ և այն: Մանկավարժական տեսանկյունից կարևոր է դրանք ճանաչել, տարբերել և համապատասխան մոտեցումներ ցուցաբերել, որոնք կօգնեն երեխային: Շատ կարևոր է աշխատել զգույշ և խուսափել սխալ և վնասակար մոտեցումներից:

Վաղ մանկության խնդիրներն են

- Ագրեսիվություն
- Ուշադրության պակաս և հիպերակտիվության համախտանիշ
- Տագնապայնություն
- Վախեր
- Հոգեկան զարգացման ընդհանուր խանգարումներ (աուտիզմ)
- Խոսքի խնդիրներ (մուտիզմ)

Ինչ է ագրեսիան

Ագրեսիան անձի ընդհանուր դիրքորոշում և հոգեվիճակ է, որոնց առկայության դեպքում անձը ունի ճնշող, բռնի գործողություններ կատարելու ձգտում:

Ագրեսիան դրդապատճառային վարք է, որը շատ հաճախ կարող է վնաս պատճառել մեկ այլ օբեկտի կամ մարդկանց, ովքեր իրենց մոտ դեպրեսիա, անհարմարություն, լարվածութ-յուն, ճնշված վիճակ են առաջացնում:

Ագրեսիվություն դրսևորվում է ինչպես միջանձնային փոխհարաբերություններում, այնպես էլ անշունչ առարկաների նկատմամբ: Սխալ դաստիարակության և հոգեկան որոշ հիվան-դությունների դեպքում ագրեսիվությունը խիստ ուժեղանում է:

Ագրեսիան կարող է լինել ինչպես կանխամտածված, այնպես էլ ոչ դիտավորյալ:

Հոգեբաններ Ա. Բասը և Ա. Դարկը առանձնացրել են ագրեսիայի հինգ տեսակ.

1. Ֆիզիկական ագրեսիա (ֆիզիկական գործողություններ ինչ-որ մեկի դեմ)
2. Գրգռվածություն(բռնկում, կոպտություն)
3. Խոսքային ագրեսիա
4. Միջնորդավորված ագրեսիա՝ ուղղորդված(բամբասանք, չար կատակներ) և չուղղորդված (ամբոխի մեջ ճչոց, ոտքերով աղմուկ և այն)
5. Նեգատիվիզմ (ընդդիմադիր վարք)

Ագրեսիվությունը, ինչպես վարքի մնացած ձևերը, ձեռք բերովի է և առանձնանում է նրանով, որ մարդը ձդտում է ձեռք բերել առավելագույնը:

Ագրեսիվ երեխայի բացահայտման չափանիշներն են.

- վիճում և անպատվում է մեծահասակներին,
- կորցնում է սեփական վերահսկողությունը,
- ուրիշներին մեղադրում է իր սխալների համար,
- նախանձում է և քինախինդ է,
- ջղայնանում է և հրաժարվում է որևէ բան անել,
- հատուկ զայրացնում է մարդկանց,
- հրաժարվում է կանոններին ենթարկվել,
- զգայուն է և շատ արագ է արձագանքում իրեն շրջապատող մարդկանց (երեխաներ, մեծահասակներ, որոնք հաճախ իրեն նյարդայնացնում են) արարքներին,

Մասնագետները տարբերում են ագրեսիայի պատճառների մի քանի խումբ.

- Սոցիալական – ֆրուստրացիա, խոսքային կամ ֆիզիկական հարձակում, հրահրում
- Արտաքին – շոգ, աղմուկ, նեղվածք, աղտոտված օդ
- Անհատական – անձ, դիրքորոշում, գենդեր

Ագրեսիվ երեխաները ագրեսիա են ցուցաբերում, որովհետև զգացմունքներն արտահայտելու այլ ձևեր չգիտեն:

Ուշադրության պակաս և հիպերակտիվության համախտանիշ

Հիպերակտիվությունը երեխաների մոտ արտահայտվում է տարիքային զարգացման անհամապատասխան անուշադրությամբ, ցրվելու հակումով, իմպուլսիվությամբ և գերշարժունակությամբ:

Ըստ հետազոտման նկատելի է դրսևորման հետևյալ բաղկացուցիչ մասեր

- Ուշադրության դեֆիցիտ
- Իմպուլսիվություն
- Բարձր շարժոցական ակտիվություն
- ցրվածություն և թափթփվածություն
- բարձր գրգռվողականություն
- գերակտիվություն

Գերակտիվություն դրսևորվում է ընկալման շեղումների մեջ: Դա հանգեցնում է նրան, որ երեխաները դժվարություններ են ունենում շրջապատի կողմից սիրո ընդունման, ուսման մեջ, որովհետև հաճախ սխալ են ընկալում առարկաները, տառերը, բառերը և այլն, իսկ հարաբերություններում, որովհետև սխալ են ընկալում ծնողների և շրջապատողների սիրո դրսևորումները:

Տարիքի հետ զուգընթաց, դեռահասության մոտ գերակտիվությունը, հիպերակտիվությու-նը, որպես կանոն անցնում են, բայց իմպուլսիվությունն ու ցրվածությունը մնում է:

Հիպերակտիվության հիմքում ընկած է գլխուղեղի մինիմալ դիսֆունկցիան:

Ըստ հետազոտության հիպերակտիվության հաղթահարման գործում կան հիմնական երեք ուղղություններ.

1. Դեֆիցիտար ֆունկցիաների զարգացում՝ ուշադրություն, վարքի և շարժողական ֆունկցիաների վերահսկում

2. Հասակակիցների և մեծահասակների հետ փոխհարաբերությունների կոնկրետ

հմտությունների մարզում

3. Անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է կազմակերպել զայրույթի հետ աշխատանք:

Հիպերակտիվ երեխայի հետ պետք է շփվել մեղմ և հանգիստ: Այնպես, որ ճչոցներ, հրամաններ ու հրահանգներ չլինեն, ինչպես նաև հիացական բացականչություններ և հուզական վառ դրսևորումներ:

Հիպերակտիվ երեխաներին դիտողություն պետք է արվի սահմանափակ, քանի որ դրա հետևանքով տուժում է երեխաների ինքնագնահատականը: Այդ պատճառով անհրաժեշտ է ուշադիր լինել այս երեխաների նույնիսկ փոքրիկ հաջողությունների հանդեպ, գովել և խրախուսել դրանց համար: Սակայն ոչ մի դեպքում չի կարելի անտեղի և անհարգի գովեստներ շնորհել:

Տագնապայնություն

Տագնապայնությունը բնորոշվում է անձնային որակ, մարդ, որը առավել հակված է տագնապի:

Տագնապի ֆիզիոլոգիական նշաններն են.

- Արագ սրտխփոցը
- Մակերեսային շնչառությունը
- Բերանի չորությունը
- Կոկորդում կծիկի զգացողությունը
- Ոտքերում թուլությունը

Բացի ֆիզիոլոգիական նշաններից կան նաև այնպիսի վարքային ցուցիչներ, որոնք խոսում են երեխայի մոտ տագնապի առկայության մասին.

- Երեխան եղունգներն է կրծում
- Ճոճվում է աթոռի վրա
- Թմբկահարում է մատներով սեղանին
- Մազերի հետ է խաղում
- Ձեռքերի մեջ պտտում է տարբեր իրեր

Տագնապի վիճակը ոչ միշտ կարելի է գնահատել որպես բացասական երևույթ: Երբեմն տագնապի զգացումն է ստիպում մարդուն մոբիլիզացնել ուժերը:

Հաճախակի կրկնվող տագնապի զգացումները կարող են վերաճել կայուն վիճակի՝ անձ-նային որակի՝ տագնապայնության:

Տագնապայնության առաջացման վրա ազդող սոցիալական գործոններից են ծնողների դժգոհությունը սեփական կյանքից , սեփական աշխատավարձից, անբավարարվածութ-յունը կյանքի պայմաններից և այլն:

Հաճախ տագնապայնություն է զարգանում երեխայի մոտ, եթե նա ներքին կոնֆլիկտի, կամ առհասարակ կոնֆլիկտի իրավիճակում է լինում: Տագնապայնությունը խթանվում է.

1. Երեխայի հանդեպ բացասական պահանջներով, որոնք կարող են ստորացուցիչ լինել, կամ նրան կախյալ վիճակի մեջ դնել
2. Անհամապատասխան, ավելի հաճախ չափից մեծ պահանջներով
3. Հակասական պահանջներով, որոնք երեխայի առաջ դրվում են մեծահասակի կողմից:

Վախ

Պետք է հստակ տարբերել տագնապն ու վախը: Տագնապը այն զգացումն է, որի կազմության մեջ մտնում են շատ զգացմունքներ, որոնցից մեկը նաև վախն է: Տագնապի զգացման մեջ հիմնական տեղը պատկանում է վախին, սակայն այն կազմված կարող է լինել նաև տխրությունից, մեղքի զգացումից, ամոթից և այլն:

Վախը մարդու կյանքին, բարորության սպառնալիքի հուզական արձագանքն է: Ուղեկցվում է նյարդային համակարգի լարվածությամբ:

Աուտիզմ

Աուտիզմը կենսաբանական և նյարդաբանական խանգարում է, որն ազդում է գլխուղեղի նորմալ գործունեության վրա, խոչընդոտում է սոցիալական հարաբերությունների և հաղորդակցվելու հմտությունների զարգացմանը և դրսևորվում է հիմնականում կյանքի առաջին երեք տարիների ընթացքում:

Ըստ DSM-ի (հոգեկան և հիվանդությունների ախտորոշման և վիճակագրութան տեղեկատու)՝ աուտիզմը տրիդա է.

- Սոցիալական փոխազդեցության բացակայություն
- Դժվարությունների հաղորդակցման մեջ
- Ստերեոտիալային վարք

Աուտիզմ ունեցող երեխան կարող է ծնվել ցանկացած ընտանիքում՝ անկախ կրթությունից, ծնողների սոցիալական կարգավիճակից:

Այն բանում, որ երեխան աուտիզմ ունի չկա ոչ ոքի մեղքը:

Խոսքային առանձնահատկություններ

- Խոսքի բացակայություն
- էխոլալիա
- Խոսքի ընկալման խանգարումներ
- Խոսքի հնչարտաբերման և պրոսոդիկ կողմ (արտահայտչականություն՝ մեղեդայնություն, ձայնի, տեմբր, ռիթմ)
- Տուժած է բառապաշարը
- Խոսքի քերականական կողմի խանգարումներ
- Կապակցված խոսքի դժվարություններ
- Կարդալու և գրելու գործընթացի դժվարություններ(խոսքի առկայության դեպքում)

Աուտիզմի ախտորոշման համար որևէ բժշկական թեստեր գոյություն չունեն: Աուտիզմը ախտորոշվում է որոշակի վարքային առանձնահատկությունների առկայությունից կամ բացակայությունից: Դրա համար մանրամասն ուսումնասիրվում է երեխայի զարգացման պատմությունը, կատարվում է անամնեզի տվյալների վերլուծություն:

Խորհուրդ է տրվում երեխաներին դիտարկել տարբեր իրավիճակներում:

Ախտորոշումն պետք է կատարվի մասնագետների խմբով, որը ներառում է հոգեբան, նյար-դաբան, հոգեբույժ, լոգոպետ և այլն փորձագետներ, ովքեր ԿԶԱՊԿ երեխաների հետ աշխա-տելու փորձ ունեն:

Մուտիզմը խոսքի գործառնական բնույթի ժամանակավոր խանգարում է: Մուտիզմը կարող է լինել ընդհանուր, երբ խոսքային կոնտակտը բացակայում է ցանկացած պայմաններում ու իրավիճակներում, և մասնակի, երբ մարդը ընդունակ չէ խոսել որոշակի մարդկանց հետ, որևէ պսիխոտրավմատիկ իրավիճակներում, բայց զրուցում է այլ մարդկանց հետ, ուրիշ միջավայրում:

Տեսակները

- Գերագնահատված վարքի մուտիզմը կապված է գիտակցված նեգատիվ վերաբերմունքով այս կամ այն մարդու (խորդ հայր, դաստիարակ և այլն) հանդեպ
- Ֆոբիկ(սոցիոֆոբիկ) մուտիզմը պայմանավորված է վախով: Կարող է լինել այն դեպքում, երբ մարդը վախենում է ուրիշների մոտ թվալ ոչ խելացի, կամ ունի որևէ խոսքային թերություն, օրինակ, կակազություն, թլվատություն: Գերզգայուն երեխան վախենում է նոր միջավայրից, մարդկանցից, նրանց աչքերի մեջ նայելուց, մոտիկ կանգնելուց, կամ խոսակցի բարձր ձայնից:
- Հիստերիկ մուտիզմի հիմքում ընկած է շրջապատող մարդկանց ենթագիտակցաբար մանիպուլյացիայի ձգտումը, որպեսզի խուսափեն անցանկալի գործունեությունից, հոգեկան լարվածությունից, ուշադրություն ստանալու, ցանկություններն իրականաց-նելու նպատակով:
- Դեպրեսիվ մուտիզմ- դրսևորվում է որպես ընկած տրամադրության սիմպտոմ, որն ուղեկցվում է ընդհանուր տոնուսի իջեցմամբ:

Մուտիզմի բոլոր տեսակներին բնորոշ են հերկյալ ախտանշանները.

- Խոսքի բացակայություն
- Պարզ գիտակցության և իրականության սթափ գնահատականի առկայություն
- Հույզերի պահպանում
- Ակտիվ շարժողական ֆունկցիաների պահպանում
- Արտաքին արձագանք բացասական պահերի և ցավային գրգիռների հանդեպ:

Պատճառները

- Ուժեղ ստրեսի հետևանքները (ավտովթար, մտերիմ մարդու մահը, ծնողների բաժանությունը)
- Նյարդաբանական խանգարումներ, որոնք բնորոշ են որոշ հոգեկան հիվանդություն-ներին (հիստերիա, շիզոֆրենիա)
- Գլխուղեղի վնասվածքի հետ կապված հիվանդություններ
- Ծնողների սխալ վերաբերմունք (գերխնամք, կամ երբ չեն հասկանում երեխաներին)

Ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ կազմակերպման համար պետք է երեխաների համար ստեղծել ապահով միջավայր, որտեղ երեխան կարող է բավարարել իր հետաքրքրությունները:

Նախապես պլանավորել երեխայի զարգացումը խթանող ուսումնական պլանը, որը ներառի երեխաների զարգացման բոլոր ոլորտները, նպաստելով իմացական, հուզական, սոցիալական և ֆիզիկական զարգացմանը:

Նպաստել երեխայի սոցիալական զարգացմանը՝ կիրառելով զարգացմանը նպաստող մեթոդներ և մոտեցումներ:

Ընտանիքի հետ ստեղծել և պահպանել դրական և արդյունավետ հարաբերություններ:

Դիտարկել և հետազոտել երեխայի գործունեությունը, պարզել երեխայի հետաքրքրութ-յունների շրջանակը:

Խրախուսել երեխային, մղել ավելին անելուն՝ դրանով նպաստելով նրա առաջընթացին, զարգացմանը, ինքնավստահությանը, հնարավորությունների լիարժեք բացահայտմանը:

Հարգել երեխայի ազատությունը, արժանապատվությունը, կարծիքը և ընձեռնել ընտրության հնարավորություն:

Կարևոր է, որ դաստիարակը իմանա երեխայի անհատական առանձնահատկությունները, ընդունի այդ երեխային այնպիսին, ինչպիսին կա, կարողանալ շփվել երեխայի հետ և ստեղ-ծել երեխաների հետ շփման ճիշտ ուղիներ, և ճիշտ աշխատել ծնողների հետ:

Ներառական կրթությունը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման համար առավել նպաստավոր միջավայր ապահովելու լավագույն տարբերակներից մեկն է, ինչը հնարավորություն է տալիս ծանոթանալ բազմազան միջավայրին, զարգացնել միջանձնային փոխհարաբերություններ կառուցելու կարողություններ ու հաղորդակցման հմտություններ:

Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս ԿՁԱՊԿ ունեցող երեխային հայտնվել իր հասակակիցների միջավայրում և նրանց հետ միասին ստանալ երեխայի վաղ զարգացման համար խիստ կարևոր նախադպրոցական կրթություն:

Յուրաքանչյուր երեխա զարգանում է յուրովի:

Նախադպրոցական միջավայրում զարգացումը և կրթությունը հնարավորություն են տալիս երեխային սովորել և զարգանալ մանկավարժների, ծնողների և ընտանիքի աջակցությամբ: Մանկավարժները պետք է առաջնորդվեն ինչպես նախադպրոցական մանկավարժության մեթոդով և սկզբունքներով, այնպես էլ՝ երեխաների հետաքրքրություն-ներով, կարիքներով և կարողություններով: Նախադպրոցական, այդ թվում՝ նաև վաղ տա-րիքի երեխաներն ունեն տարաբնույթ կարիքներ՝ սնվել, հագնվել, անձնական հիգիենա, անվտանգություն, հուզական կապվածություն և քուն:

Պետք է կրթություն ապահովել յուրաքանչյուր երեխայի զարգացման համար:

Սա նշանակում է, որ յուրաքանչյուր դաստիարակ պետք է գիտելիքներ ունենա այն մասին, թե ինչ կարող է և դեռ չի կարող անել յուրաքանչյուր երեխա՝ ելնելով ինչպես երեխաների զարգացման տարիքային օրինաչափություններից, այնպես էլ՝ կոնկրետ երեխայի զարգաց-ման ընթացքից:

Միևնույն ժամանակ ՆՈՒՀ-ում աշխատող յուրաքանչյուր դաստիարակ պետք է տիրապետի տվյալ տարիքի երեխաների հետ կիրառվող մանկավարժական մոտեցումներին, մեթոդներին ու հնարներին և կարողանա ճկուն կերպով ընտրել և կիրառել դրանք: Նախադպրոցական տարիքում երեխաների զարգացման և կրթության ուղղությամբ իրականացված աշխատանքները անմիջականորեն անդրադառնում են երեխայի հետագա զարգացման և հաջորդ կրթական աստիճանի՝ դպրոցական ուսումնառության նախապատրաստման վրա: Այս տարիքային խմբում երեխայի զարգացումը միտված է իր առանձնահատկություններին համապատասխան զարգացնող միջավայրի և կրթության

կազմակերպումը խիստ կարևոր է ինչպես ծնողների, այնպես էլ նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ողջ գործընթացում շատ կարևոր է բացահայտել յուրաքանչյուր երեխայի ուժեղ կողմերը, հնարավորություններն ու հետաքրքրությունները:

Նախադպրոցական կրթության պայմաններում շատ կարևոր է երեխաներին դիտարկել, որպիսի ճիշտ կազմակերպել ուսումնադաստիարակչական աշխատանքները: Հետաքրքրությամբ և ուշադրությամբ երեխաներին դիտելը և լսելը թույլ է տալիս ավելին իմանալ նրանց մասին : Արդյունքում տեղեկանում ենք, թե ինչն է երեխաներին հետաքրքրում, ինչն է ժպիտ առաջացնում նրանց դեմքին, տեղեկանում ենք այն մասին, թե ինչ գիտեն նրանք և ինչ կարող են անել: Հատկապես այս տարիքում շատ կարևոր է հասկա-նալ, թե ինչն է մղում երեխային սովորել և զարգանալ: Մանկավարժի համար երեխային դիտարկելը սկսվում է այն բանից, թե ինչպես է յուրաքանչյուր երեխա վարվում, սովորում, արձագանքում նոր իրավիճակներին և փոխազդում ուրիշների հետ: Այս տեղեկատվությու-նը կարևոր է, քանի որ այն օգնում է բարելավել պարապմունքները՝ բարելավելով փոքրիկ սովորողների կարիքները: Դիտարկումը թույլ է տալիս հասկանալ, թե ինչն է հետաքրքրում երեխային, ինչպես է նա արձագանքում որոշակի գործողություններին կամ միջավայրին: Ինչպես է նա արձագանքում փոփոխություններին և սենյակի կարգուկանոնին:

Խոսքի խանգարում ունեցող նախադպրոցականների ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ կազմակերպում

Խոսքը բարձրագույն հոգեկան գործընթաց է, որն ունի մի շարք գործառույթներ: Խոսքի միջոցով մարդիկ հաղորդակցվում են: Խոսքը հնարավորություն է տալիս արտահայտել մեր հույզերը, զգացմունքները: Խոսքը մտածողության գործիք է և երեխայի ճանաչողության զարգացման միջոց: Խոսքը ունի նաև վարքի վերահսկման գործառույթ:

Խոսքի զարգացումը հոգեֆիզիոլոգիական տեսանկյունից բարդ գործընթաց է: Այն տեղի է ունենում աստիճանաբար:

Խոսքի խանգարում ունեցող երեխաների համար խիստ կարևոր է խմբում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայությունը: Այս համատեքստում մեծ տեղ է տրվում երեխաների հանդեպ մանկավարժների բարյացակամ և սիրալիր վերաբերմունքը: Շատ կարևոր են մանկավարժների անձնային հատկանիշները, որը բացատրվում է այն հանգամանքով, որ խոսքի խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաներն ընդօրինակում են մեծահասակների խոսքը, վարվելակերպը և այլն: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խոսքի խանգարում ունեցող երեխաները հաճախ նեղացկոտ են և ունեն բարձր հուզականություն: Մանկավարժը պետք է կարողանա ճիշտ գնահատել երեխայի արարքները, դրանց դրդապատճառները, ինչպես նաև կարողանա ապրումակցել երեխային, իր հանդեպ երեխայի մեջ ձևավորել դրական վերաբերմունք՝ փոխըմբռնում:

Խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների ոչ նորմատիպային (ոչ ստանդարտ) վարքային դրսևորումներին(կանոններին չենթարկվելը, պարապմունքներին չմասնակցելը, այլ երեխաների և իրենց միջև սահմանը չզգալը, նրանց խաղալիքները խլելը և այլն) նեգատիվիզմի այսօրինակ դրսևորումը կարող է լինել պաշպանական մեխանիզմի դրսևորում՝ ի պատասխան հոգեբանական ճնշմանը և մանկավարժական խստության դրսևորմանը: Այս դեպքում արդյունավետ է երեխայի ուշադրությունը տվյալ իրավիճակից շեղել և նրան իր համար որևէ հետաքրքիր, ակտիվ աշխատանքի մեջ ներգրավելը:

Երեխաների բառապաշարի հարստացման, ճշտման և ակտիվացման աշխատանքները պետք է իրականացվեն ուսումնական ռեժիմի բոլոր օղակներում:

Պետք է՝

- ճիշտ արտաբերել բոլոր հնչյունները,
- հստակ արտասանել բոլոր բառերի վերջավորությունները,
- երեխաների հետ խոսել մի փոքր դանդաղ տեմպով, ոչ բարձր ձայնով,
- մատչելի և կապակցված շարադրել ուսումնական նյութը՝ հաշվի առնելով երեխաների ոչ միայն տարիքը, այլ նաև խոսքի զարգացման մակարդակը:

Անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի խոսքի խանգարման բնույթը, դրա արտահայտման աստիճանը, երեխայի խոսքային կարողությունները և անձնային առանձնահատկությունները: Երեխաները նաև տարբեր կերպ են վերաբերում իրենց խնդրին. որոշ երեխաներ, զգալով իրենց խնդիրը, դառնում են ինքնամփոփ, ոչ նախաձեռնող, մյուսները չեն էլ գիտակցում իրենց խնդիրը, և սա նույնպես պետք է հաշվի առնել երեխաների հետ իրականացվող աշխատանքներում: Շատ կարևոր է, որ երեխայի հետ աշխատող լոգոպեդն ու մանկավարժը համագործակցեն աշխատանքի միասնական ուղղվածությունը պահպանելու և շտկողական աշխատանքի շարունակություն ապահովելու նպատակով:

Կրթության կազմակերպումը

Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների դժվարություններն առաջին հերթին արտահայտվում են մտածողության խանգարումներով: Ուշադրությունը բնութագրվում է անբավարար կամածինությամբ և նպատակաուղղվածությամբ, կենտրոնացման դժվարություններով, ինչպես նաև տեղափոխման դժվարություններով:

Մտավոր զարգացման խանգարումը բացասաբար է անդրադառնում նաև այս երեխաների հուզակամային և անձնային ոլորտի զարգացման վրա: Երեխան կարող է լինել զգուշավոր, վախվորած կամ ընդհակառակը՝ ագրեսիվ, ապաարգելակված:

Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխայի հետ մանկավարժական աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ այս երեխաների զարգացման դինամիկան ընթանում է նույն օրինաչափություններով, ինչ իրենց բնականոն զարգացում ունեցող հասակակիցներինը, պարզապես ավելի դանդաղ տեմպերով: Ցանկալի է տարվա մեջ մի քանի անգամ՝ ուսումնական տարվա սկզբին, մեջտեղում և վերջում, տարբեր ձևերով գնահատել այս երեխաների զարգացման գործընթացը, ինչը թույլ կտա հստակ պատկերացում ունենալ, թե ինչ ուղղություններով է անհրաժեշտ կազմակերպել աշխատանքները:

Աշխատանքները պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել <<երեխայի մոտակա զար-գացման գոտին>>, այսինքն՝ երեխայի կողմից մեծահասկի աջակցությամբ յուրացվող գիտելիքների և կարողությունների սահմանագիծը [Выготский, 2016]:

Հետևյալ մեթոդական խորհուրդները կիրառելը կօգնի մտավոր զարգացման խանգարում ունեցող նախադպրոցականների հետ աշխատանքները կազմակերպել առավել արդյունա-վետ կերպով.

- Երեխայի՝ ՆՈՒՀ-ում հարմարացման շրջանի ընթացքում անհրաժեշտ է ռեժիմային գործընթացում ճկուն լինել՝ երեխաներին սկզբում 2 ժամով ընդունել, ապա երկարացնել խմբասենյակում մնալու ժամանակը՝ հաշվի առնելով նրա մտավոր զարգացման առանձնահատկությունը, տարիքը:
- Երեխաների հանդեպ պետք է ցուցաբերել անհատական մոտեցում, սակայն դա չպետք է այնքան ընդգծված իրականացվի, որ երեխայի հանդեպ առանձնահատուկ վերաբերմունքը հստակ նկատելի լինի մյուս երեխաների համար:
- Երեխաների հետ հաղորդակցվելիս խոսել հնարավորինս արտահայտիչ և հուզակա-նորեն ընդգծված խոսքերով, որպեսզի հնարավոր լինի գրավել երեխաների ուշադրությունը և շարժել հետաքրքրությունները:
- Իրականացվող աշխատանքներում մեծ տեղ հատկացնել ծնողների հետ համագոր-ծակցությանը: Աշխատանքը կառուցել այնպես, որ երկու կողմից երեխային միասնա-կան պահանջներ ներկայացվեն:
- Երեխային տրամադրվող տեղեկատվություն փոխանցել օգտագործելով հնարավորի-նս շատ զգայարաններ (տեսողական, լսողական, համի, հոտի, շոշոփողական): Հնարավորինս շատ օգտագործել տեսողական խթանիչներ՝ կիրառելով պայծառ, գունեղ, իրականին հնարավորինս մոտ պատկերներ և տեսանյութեր:
- Երեխաների պատրաստած աշխատանքները ցուցադրել տեսանելի վայրում, որը հասանելի կլինի թե՛ ծնողներին, թե՛ երեխաներին, ինչը կխթանի նրանց հետաքրքրությունն ու մոտիվացիան:
- Երեխայի հետ պահել մարմնական կոնտակտ՝ շոյել այտը, գլուխը, բռնել ձեռքը, գրկել երեխային:
- Աշխատանքի ընթացքում ուշադիր լինել երեխայի վարքի փոփոխություններին՝ լռությանը, հանգստությանը, պասիվությանը, ագրեսիային, ուրախությանը և այլն:

- Դա հնարավորություն կտա հասկանալ երեխայի վարքի փոփոխությունների պատ-ճառները և հետագայում կանխատեսել երեխայի վարքը:

- Սովորեցնել ճանանչել և անվանել մարմնի մասերը, մրգերի, բանջարեղենի, կենդա-նիների, տրանսպորտի, կահույքի, խաղալիքների և շրջապատող կեցաղային իրերի անուններ:
- Ներգրավել երեխային պարապմունքի ամբողջ խմբի հետ միասին, կիրառել շատ դի-դակտիկ պարագաներ:
- Տարբեր թեմաների ուսուցման ժամանակ կիրառել հնարավորինս շատ բնական նյութեր և իրավիճակներ, ինչը թույլ կտա ձևավորել ճիշտ պատկերացումներ առարկաների և երևույթների մասին: Ուսուցանվող նյութը ամրապնդել զուգահեռ կատարվող գործողություններով:
- Ընկալման զարգացման նպատակով կիրառել մասերի բաժանած պատկերներ և խնդրել դրանցից ստանալ ամբողջ պատկերը: Առաջադրանքի կատարման ընթաց-քում փորձել չօգնել երեխային, առաջին հերթին թող երեխան փորձի դա անել, թեկուզ սխալ, եթե նա երկար ժամանակ չի ստանում պատկերը կամ չի դրսևորում հետաքրքրություն, օգնում ենք նրան: Ուշադրությունը կենտրոնացնել առարկայի գույնի, ձևի, չափի վրա:
- Երեխայի հետ կատարվող ցանկացած աշխատանքի ընթացքում հարստացնել և ամրապնդել երեխայի բառապաշարը:

Վարքային և հուզական խանգարումներ ունեցող նախադպրոցականների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

Նախադպրոցական տարիքում երեխաների հոգեկան առողջության հետ կապված խնդիրները հաճախ առնչվում են հուզական և վարքային մի շարք դժվարությունների և խանգարումների հետ:

Երեխայի անցանկալի վարքը կարող է հանդիսանալ ինչպես մանկավարժական ոչ արդյու-նավետ մոտեցումների, սոցիալական տարբեր գործոնների ներգործության հետևանքով առաջացած վարքային խնդիր, այնպես էլ տարբեր գործոններով պայմանավորված վարքա-յին խանգարում: Վարքային տարբեր խանգարումների ժամանակ ևս դրսևորվում են վար-քային բազմապիսի խնդիրներ, որոնք կարող են հանդես գալ ինչպես ինքնուրույն, այնպես էլ այս կամ այն վարքային խանգարման շրջաններում: Երեխայի հակադրվող վարքը, իմպուլսիվությունը, սեփական վարքի վերահսկման հետ կապված դժվարությունները, ստա-խոսությունը, գողությունը կարող են դիտարկվել որպես վարքային լուրջ խնդիրներ, սակայն սրանց համակցությունները որոշակի կայուն ժամանակահատվածում արդեն դիտարկվում են որպես վարքային խանգարում:

Ցանկացած արտասովոր վարքագիծ, որը գերազանցում է տվյալ տարիքի և զարգացման մակարդակին բնորոշ վարքային դրսևորումների հետ կապված մեր սպասումները և բար-դացնում են շրջապատող աշխարհի ու մարդկանց հետ երեխայի փոխհարաբերությունները, հաճախ բնութագրվում են որպես «հանդուգն վարք»: Է. Էմերսոնի կողմից այդպիսի վարքը բնութագրվում է որպես «հաճախականությամբ կամ տևողությամբ սոցիալապես անընդու-նելի այնպիսի վարք, որը լրջորեն վտանգում է տվյալ մարդու կամ այլոց» [Emerson E.,2001]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները ևս հանդուգն վարքի տարբեր դրսևորումները կարող են կիրառել այնպիսի կոնկրետ նպատակների համար, ինչպիսիք են զգայական խթանումը, ուշադրություն գրավելը, տարբեր պահանջնե-րից

խուսափելը, հաղորդակցման սահմանափակ հնարավորություններն արտահայտելը [NICE 2015]: Ինչպես վարքային խանգարումներն, այնպես էլ վարքային դրսևորումներին հաճախ բնորոշ է այնպիսի վարքային դրսևորումներ, ինչպիսին ագրեսիան է:

Ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ (ՈՒՊԳՀ) վարքային և ճանաչողական բաղադրիչներ պարունակող հավաքական համախտանիշ է: Այս համախտանիշը իրենից ներկայացնում է ուշադրությունը կենտրոնացնելու ինքնակառավարվելու և ինքնակազմակերպվելու դժվարություն:

ՈՒՊԳՀ ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանքներ կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ քայլերը՝

- Խուսափել միժամանակ մեծ թվով հրահանգներ և առաջադրանքներ ներկայացնելուց:
- Ավելի շատ ժամանակ տրամադրել առաջադրանքն ավարտելուն:
- Առաջադրանքներն բաժանել փոքր մասերի:
- Օգտագործել վայրկենաչափ կամ ավազի ժամացույց
- Սահմանել նպատակներ և միասին քննարկել քայլերն ու դրանց հաջորդականությունը:
- Երեխային նկատել հատկապես այն պահերին, երբ նա ցանկալի վարք է դրսևորում և խրախուսել նրան:
- Աշխատել երեխային հնարավորինս զերծ պահել զգայական գերբեռնումից, ավելորդ գրգիռիչներից, շեղող ազդակների ազդեցությունից:
- Օգտագործել ոչ խոսքային հաղորդակցման միջոցներ (հայացք, ժեստ, դիմախաղ) իր վարքի կարդավորման անհրաժեշտության մասին երեխային հուշելու և ցանկալի վարքը խրախուսելու համար:
- Հստակ ու պարզ բացատրել արարքների հետևանքները:
- Ակտիվությունը սպառելու եղանակներ գտնել:

Ինչպես աշխատել մանկական տագնապայնություն ունեցող երեխաների հետ

- Հնարավորինս զերծ մնալ մրցակցային խաղերից, որոնք արագություն են պահանջում երեխայից:
- Խուսափել երեխային ուրիշների հետ համեմատելուց:
- Նպաստել երեխայի ինքնագնահատականի բարձրացմանը:
- Օգնել երեխային ձեռք բերել և դրսևորել ինքնավստահ վարքի մոդելներ: Խրախուսել անգամ ամենաչնչին ձեռքբերումների դեպքում, բայց միաժամանակ աջակցել ունենալ ավելի շատ ձեռքբերումներ, հատկապես իրենց տագնապեցնող իրավիճակների հաղթահարման հարցում:
- Խուսափել հաճախակի դիտողություններ, նկատողություններ անելուց:
- Ցանկացած նոր իրավիճակի կամ խաղի մեջ երեխայի ներգրավումն իրականացնել աստիճանաբար:
- Խուսափել փակ աչքերով խաղեր խաղալուց: Աչքերը փակելու պահանջը կարող է սրել երեխայի տագնապները և առավել բարդացնել իրավիճակը:

- Երեխայի հետ կիրառել շնչառական և մկանային լարվածությունը թուլացնող վարժություններ:

Ինչպես ճիշտ աշխատել աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող երեխաների հետ

Աուտիստիկ սպեկտորի խանգարումը ի հայտ է գալիս կյանքի առաջին 5 տարիների ընթացքում և շարունակվում ողջ կյանքի ընթացքու: Այն ամենից հաճախ հանդիպող զարգացման խանգարումներից մեկն է և 4 անգամ շատ հանդիպում է տղաների քան աղջիկների մոտ:

- Հաղորդակցման հեռավորության սահմանում, որը կենսականորեն կարևոր է: Ֆիզիկական սահմանների կտրուկ կամ հանկարծակի խախտումները կարող են շատ տհաճ լինել նրա համար: Այդ իսկ պատճառով պետք չէ ավելորդ շտապողականութ-յուն դրսևորել երեխայի հետ հաղորդակցման կապեր հաստատելու գործընթացում:
- Որոշակի հեռավորություն պահպանելու նպատակով երեխան կարող է նստել մեջքով, մտնել սեղանի տակ, թաքնվել անկյունում, փակել դեմքը և այլն: Նման դեպքում խու-սափել կտրուկ միջամտություններից, աստիճանաբար փորձելով կրճատել հեռավո-րությունը, հետևելով նրա արձագանքներին:
- Առաջին կոնտակտի հաստատման ընթացքում հաշվի առնել երեխայի հետաքրքրութ-յուններն ու նախասիրությունները:
- Համատեղ գործունեության եզրեր գտնել:
- Երեխայի հետ խոսքային հաղորդակցում կիրառելիս փորձել հասկանալ՝ արդյո՞ք երեխան ուշադրություն դարձնում է մեր խոսքին, արձագանքու՞մ է անվանը, կատարու՞մ է պարզ հրահանգներ, թե՞ ոչ: Օգտագործել պարզ բառեր, պարզ հրահանգներ, ձայնի հնչերանգային փոփոխություններ, տարբեր ձայնարկություններ խոսքի նկատմամբ ուշադրություններ գրավելու նպատակով: Երեխայի հետ հաղորդակցվելիս ընտրել այն եղանակը, որը նա արդեն յուրացրել է (օրինակ՝ եթե սովորել է իր ցանկությունն արտահայտել նկարների միջոցով, ապա նրա հետ օգտագործել նկարներով հաղորդակցման եղանակը):
- Սովորեցնել սպասել իր հերթին, դիմել ընկերոջը, արձագանքել, երբ իրեն դիմում են:
- Խրախուսել երեխայի հաղորդակցվելու բոլոր ձևերը:

Եզրակացություն

Երեխաների հետ արդյունավետ փոխհարաբերություններ կառուցելու ճանապարհը երկար է ու մարտահրավերներով լի: Պետք է բազմաթիվ ջանքեր գործադրել՝ երեխայի կարիքներին համապատասխան ռազմավարություն մշակելու համար փնտրել դաստիարակման և զարգացման արդյունավետ միջոցներ ու մեթոդներ: Որքան ճիշտ են ընտրված երեխայի զարգացման, նրա վարքի կարգավորման ու դաստիարակման նպատակով կիրառվող մեթոդներն ու միջոցները, այնքան ավելի ներդաշնակ են երեխայի հետ մեր փոխհարաբերությունները, իսկ երեխայի ու մեր միջև ծավալվող ցանկացած արդյունավետ և հոգեբանորեն առողջ փոխհարաբերություններ հարստացնում է փոքրիկի զարգացման և դաստիարակման մեթոդների ու միջոցների մեր զինանոցը:

Այսպիսով ուսուցման գործընթացը փոխներգործություն է, որի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական հաղորդակցման ոճով, երեխաների և մանկավարժների փոխհարաբերությունների որակով: Մանկավարժները երեխաների համար պետք է նախապատրաստեն միջավայր, որտեղ նրանք սովորեն ակտիվ հետազոտության միջոցով՝ փոխգործելով մեծահասակների, հասակակիցների և նյութերի հետ: Ներկայումս՝ հասարակության զարգացման ժողովրդավարական սկզբունքների հարստացման ճանապարհին, անհրաժեշտ է ուսումնադաստիարակչական աշխատանքները ուսուցանել ուսուցման նոր մեթոդներով:

Գրականության ցանկ

1. <<Մանկապարտեզի ուսուցիչների դասավանդողների դասավանդում>> Երևան 2016
2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում- 2018
3. https://hmk.am/wp-content/uploads/2021/03/dzernark-mankavarjneri-hamar.pdf?fbclid=IwAR1Ji2gwM-Br9D7Vn25MAYEqizyZtFXYRDtHR8UXlCEzT9DQX5M1rmxucU4
4. https://escs.am/am/news/13878
5. https://www.unicef.org/armenia/media/3396/file/
6. https://www.unicef.org/armenia/media/3501/file/